Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՆԱԴԻԱ ՍԱՐԱՖՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՋՆԻՒ ՏԻԿԻՆ ՆԱՏԻԱՅ ՍԱՐԱՖԵԱՆ, ՈՐ Ի ԴԻՏՐՈՅԹ, ԱՄՆ

Ուրախութեամբ տեղեկացանք ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից, որ կազմակերպուում է մեծարման երեկոյ՝ ի գնահատութիւն թեմական կեանքում Ձեր ծառայութիւնների եւ մեծ ու ազնիւ վաստակի, որ ունէք Դիպրոյթի Սուրբ Յովհաննէս եկեղեցուն կից Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Ալեքս եւ Մարի Մանուկեան ամենօրեայ վարժարանի կեանքում:

Յարգելի Տիկին Սարաֆեան, այսօր Մենք առիթն ունենք անդրադառնալու, որ մանկավարժութեան շնորհակալ առաքելութեանը Դուք նուիրուել էք երեսուն տարիներ, որոնցից շուրջ քսանը ծանրաբեռնուած են եղել նաեւ Ալեքս եւ Մարի Մանուկեան ամենօրեայ վարժարանի տնօրէնուհու պարտականութիւններով: Ձեր տնօրինութեան շրջանում մեծ ձեռքբերումներ են արձանագրուել վարժարանի ուսումնակրթական կեանքում՝ առաւել ճանաչուած ու անուանի դարձնելով ազգային այս կրթօջախը: Դպրոցի յարկի ներքոյ յաջողութիւններն ու բարի արդիւնքը ձեռք են բերուել Ձեր մանկավարժական փորձառութեամբ, հոգեբանութեան բնագաւառում հարուստ գիտելիքներով, ինչպէս եւ՝ Ձեր ու վարժարանի մանկավարժների հոգածու աշխատանքի շնորհիւ: Անուազ են բոլորիդ նախանձախնդրութիւնն ու ջանքերը, որ կենդանի մնայ հայորդեաց շուրթերին մեր մայրենին եւ միշտ հարազատ լինի նրանց հոգիներին մեր նախնեաց ժառանգութիւնը: Գնահատելի է, որ Դուք առանձնակի կարեւորում էք մեր մատաղ սերնդի քրիստոնէական կրթութիւնը, որպէսզի դառնան մեր Սուրբ Եկեղեցու բարեպաշտ ու արժանաւոր զաւակները եւ արժանաւոր անդամները հասարակութեան, որի մասն են կազմելու: Ձեր աշակերտների ու գործընկերների ջերմ սէրն ու յարգանքը Ձեր հանդէպ լաւագոյն արտայայտութիւնն է Ձեր երախտարժան գործունէութեան:

Մեծազնիւ Տիկին Սարաֆեան, մեր ժողովրդի հոգեւոր կենտրոն եւ Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ, բարձր գնահատելով Ձեր ծառայութիւններն ու տարիների վաստակը, սիրով ընդառաջելով բարե-

ջան ձեր առաջնորդի ազնիւ խնդրանքին՝ շնորհում ենք Ձեզ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ-ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Ամենակալ Իր հայրական հովանու ներքոյ բաջառողջ ու երջանիկ պահի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին եւ արժանացնի երկնառաք բիւր բարիքների:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2005 եւ ի թուին Հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 319